Արձանագրություն N 2

2026-2027 թվականների Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/10» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «03» «Հոկտեմբերի» 2025թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հ. Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Ա. Գալուստյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Մնացականյան)

Ընդունել ի գիտություն, որ 12.08.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի օգոստոսի 26-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի օգոստոսի 27-ին ժամը 11:00-ին: 2025 թվականի օգոստոսի 28-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Արփիմեդ» ՍՊԸ	info@arpimed.com	03519299

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած միակ հայտ ներկլայացրած մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Մնացականյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի հիվանդության և անաշխատունակության մեջ գտնվելու պատճառով հայտերի գնահատումը կասեցվել է և 19.09.2025թ. Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի թիվ 5706-Ա հրամանով իրականացվել է նշված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմի փոփոխություն և սահմանվել է նոր կազմ, անփոփոխ թողնելով գնահատող հանձնաժողովի

նախագահի և անդամների թեկնածությունները, փոփոխելով քարտուղարին՝ Հասմիկ Սարգսյանի փոխարեն սահմանելով քարտուղար Արմինե Գալուստյանին:

Առաջին տեղը զբաղեցրած միակ հայտ ներկայացրած մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Հ. Մնացականյան)

Մասնակցի կողմից ներկայացված վերջնական գները 27.08.2025թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Մնացականյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Մնացականյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակցի կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

- «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/10» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր «Արփիմեդ» ՍՊԸ-ն, 31,399,200 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/10» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել՝ հայտ է ներկայացրել մեկ մասնակից և վերջինիս հետ կնքվելու է պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Ա. Գալուստյան

Գնառաջարկներ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/10

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Անվանումը	Քանակ	Միավորի գին	Նախահաշվային գին	Ներկայացված հայտեր	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Միավորի գինը առանց ԱԱՀ	Միավորի գինը ԱԱՀ-ով
							Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին		
1	1	Ամիտրիպտիլին	1,764,000	7.80	13,759,200	Արփիմեդ ՍՊԸ	11,466,000	2,293,200	13,759,200	11,466,000	2,293,200	13,759,200	6.50	7.80
2	1	Ռիսպերիդոն	735,000	24.00	17,640,000	Արփիմեդ ՍՊԸ	14,700,000	2,940,000	17,640,000	14,700,000	2,940,000	17,640,000	20.00	24.00